Սեպտ. 10-ին Խորհրդարանը որոշեց հիմնել Ազգագրական-Մարդաբանական Թանգարան-գրադարան, որին յանձնել ի սեփականութիւն Հայոց Ազգագրական Ընկերութեան շարժական և անշարժ գոյքը՝ համաձայն վերջինիս ընդհանուր ժողովի որոշման: Ազգ. Ընկերութիւնը նուիրել էր Հայաստանին իր ամբողջ գրադարանը — մօտ 10,000 գրքեր, պարբերականներ, 120 գրչագիր-ձեռագիրներ, ազգագրական նիւթեր, թերթեր և այլն: Ընկերութեան հիմնադիր ու վարիչ Ե. Լալայեանն էլ տեղափոխւում էր Հայաստան միևնոյն պաշտօնով:

1919թ. վերջին Երևանում արդէն գործում էին թատերական վարժարանը, երաժշտական, հայոց լեզուի, մանկավարժական դասընթացներ և մի շարք ուրիշ կրթական նոր հիմնարկութիւններ:

Կառավարութիւնը խոշոր գումարներ ծախսեց ներգաղթի վրա. մայիս 3-ին յատկացուեց 36,200,800ռ. Կարսի ներգաղթի գործին: Այդ գումարից 15 միլիոնը պիտի գնար գաղթականների փոխադրութեան և մի ամսւայ ապրուստի, 17,486,800ռ. պիտի տրուէր փոխարինաբար տնտեսութեան վերականգնման համար, իսկ մնացածը պիտի գործադրուէր վարչական կազմակերպութեան, բժշկա-առողջապահական և այլ կարիքների: Յունիս 24-ին յատկացուեց 9,744,100ռ. Ազրբէջանի, Նուխիի, Արէշի, Շամախիի, Գէոքչայի և Ղուբայի գաւառների 20,000 հայերին Հայաստան փոխադրելու համար: Մէկ միլիոն ռուբլին պիտի ծախսուէր իբրև ճանապարհի վարձ, 3,600,000ռ.՝ երկու ամսւայ ապրուստի միջոց և 944,000ռ., որպէս կազմակերպական ծախս:

Այս մի քանի ոչ լրիւ տեղեկութիւնները բաւական են ցոյց տալու համար, որ ներքին լարուած աշխատանք էր կատարւում Հայաստանում: Տարւայ վերջը արդէն երկիրը դանւում էր համեմատական բարեկարգութեան մէջ և ոգևորութեան ու գուրգուրանքի առարկայ էր ո՛չ միայն Հայաստանում, այլ և դուրսը ապրող բոլոր հայերի համար: Հայաստանը դարձել էր այն յուսատու փարոսը, որ իրեն էր քաշում աշխարհի չորս կողմը փռուած հայութիւնը: Իբրև արտայայտութիւն նման տրամադրութեան, արձանագրենք Թիֆլիսի հայ մտաւորականութեան մղումը: Դեկտեմբերի վերջերին այնտեղ կազմուեց Հայ Կուլտուրական Հաստատութիւնների Միութիւն՝ բաղկացած Հայ Գիւղատնտեսական Ընկերութիւնից, Հայոց Տեխնիկական Ընկերութիւնից, Հայ Բժիշկների Միութիւնից, Ազգագրական Ընկերութիւնից, Հայ Կանանց Միութիւնից, Հայ Իրաւաբանների Միութիւնից, Կովկ. Հայոց Բարեգործական Ընկերութիւնից և այլն: Միութեան նպատակն էր համաձայնեցնել առանձին ընկերութիւնների աշխատանքները և, ըստ կարելւոյն, բարգմակողմանի օգնութիւն և լայն աջակցութիւն ցոյց տալ Հայաստանի կառավարութեան՝ երկրի վերաշինութեան գործում: Միութեան մէջ մտնում էին Թիֆլիսի գրեթէ բոլոր հայ մասնագէտներն ու հասարակական գործիչները, որոնք, առանց որևէ ակնկալութեան, պատրաստակամութիւն էին յայտնում ծառայելու Հայաստանին, ի հարկին, տեղափոխւելով նաև Հայաստան: